ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

24/08220

17.6.2009թ

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԿԻՆ ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Հակոբյան

Ի պատասխան Ձեր 11.06.2009թ. 01/19/69809 թվակիր գրության՝ «Հայրենիք-Սփյուռք գործակցության մասնագիտական հանձնախմբերի ձևավորման և առանձին բնագավառների ներկայացուցիչների համահայկական առաջին համաժողովների կազմակերպման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ, տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱԳՆ հավանություն է տալիս նախագծին:

Միաժամանակ, ի լրումն թեմայի, կից ուղարկում ենք առաջարկություններ 2010 թվականին նախատեսվող համահայկական միջոցառումների վերաբերյալ:

Առդիր՝ 1 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԻՆԵ ՂԱԶԻՆՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2 ՇԵՆՔ, ԵՐԵՎԱՆ 0010; ՀԵՌ. 37410/544041, ՖԱՔՍ 37410/543925
2 GOVERNMENT BUILDING, REPUBLIC SQUARE, YEREVAN 0010, ARMENIA; TEL. 37410/544041, FAX 37410/543925; COMGROUP@MFA.AM

Առաջարկություններ

Հայաստան-Սփյուռք գործակցության զագացմանն ուղղված բազմաթիվ միջոցառումների ծիրում առաջնայիններից մեկն ենք համարում տեղեկատվական դաշտի հզորացումն ու արտասահմանյան մամուլի բոլոր տեսակներում (տպագիր, էլեկտրոնային և հեռուստառադիո) մեր պետության առաջնահերթությունների ու մարտահրավերների մասին խոսելու հնարավորության ստեղծումը: Նման հնարավորություն ստեղծելու նպատակով առաջարկում ենք.
2010 թվականի ապրիլ - մայիս ամիսներին Երևանում կազմակերպել արտասահմանյան (ոչ հայկական) ճանաչված լրատվական մարմիններում աշխատող, հայկական արմատներ ունեցող լրագրողների հավաք՝ տալով դրան բացառիկ նշանակություն: Նման կարևորությունը բացատրում ենք նրանով, որ՝

- աշխարհի առաջնային լրատվամիջոցները կանդրադառնան Հայաստանին, գոնե ճանաչողական տեղեկատվությամբ,
- մենք կունենանք արդեն մեր ժուռնալիստներին, որոնց հարկ եղած դեպքում կարող ենք դիմել այս կամ այն խնդրի հանրայնացման համար
- նշյալ լրատվամիջոցների շնորհիվ մենք կարող ենք ետ բերել հայության այն ոչ փոքրաթիվ զանգվածը, որը հայախոս չէ և բավականին հեռացել է արմատներից:

Լրագրողներին շահագրգռելու նպատակով առաջարկում ենք նրանց բոլոր ծախսերը հոգալ պետական կամ հովանավորչական միջոցներով:

2. Առաջարկում ենք ստեղծել ժուռնալիստների համահայկական միավորում (ԺՀՄ), որն իր մեջ կներառի հայաստանյան մամուլի (բառիս լայն իմաստով) արտերկրի հայ մամուլի, նաև ոչ հայ մամուլի հայկական արմատներ ունեցող ներկայացուցիչներին: Կազմավորումը կարող է աշխատել նախատիպ ունենալով Հայ կանանց միջազգային կազմակերպությունը կամ ուսումնասիրելով նմանատիպ այլ, նաև ոչ հայկական կազմակերպությունների փորձը:

3. Տեղեկացնում ենք, որ որոշում ընդունելու դեպքում ՀՀ ԱԳՆ-ն (սփյուռքի բաժինը) պատրաստակամ է դառնալ համակազմակերպիչ և իր վրա վերցնել կազմակերպչական աշխատանքի զգալի մաս:

ՎԵՐՋ